

891.99 U

U-43

ՅԵՆ. ԵՂԵՐԱՐ.

391-990.

Ա-43

կր.

ԳՈՒԹԱՆԻ ՄԱՏԱՂԸ

Պատկերազարդ

Պատմածք

ՄԱՆՈՒԿՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(Ղաղախի գեղական կենտրոն)



Էլեքտրաշարժ տպ. «Հերմես» Ս. Պ.
Եղիգարեանի Մաղաթ. փ.

1907

1002
6494

- 5 FEB 2013

6347

Արտատպւած «ՀԱՍԿԵՐ»-ից



աղը, հինգշաբթի,
Համբարձման տո-
նըն է:

Օրը՝ երեկոյ էր,
արեւը թերւել էր
կուլ գնալու: Նրա ոսկեգօծ
թէժ ճառագայթների փոխարէն՝
արծաթափայլ հով շողերն էին
թրուրում շինական եկեղեցու
կաթուղիկէի երեսին:

Գիւղի «բէօխվա-բէդխուղէրը»,
մաճկալն ու հոտաղը, ուլախա-
րածն*) ու հօրիւրչին**), մի խօսքով
բոլորը, բոլորը հաւաքւել էին ե-
կեղեցու գաւիթն ու վաղւան մա-
տաղի նախապատրաստութիւննե-
րի մասին մտածում:

*) Լճկան անասուններ արածաց-
նող.

**) Գութանի երկրորդ և միւս լուծ-
ները կառավարողներ:

Երկար խօսելուց ու խորհելուց յետոյ, մաճկալ Ունանը վերջ տւեց զրոյցին նրանց հանգստացնելով։

— Տղէրը ջան, դէ հըմիկ որ, մատաղի ամեն ինչը պատրաստ է։ Մենակ թէ էգուց՝ ընգնանի պըղինձերը շուտ կը բերէր, որ «Եփը» վախտին դնենք կրակին։

— Շատ լաւ, ուստա Ունան, միամիտ կաց, պատասխանեցին նրան կարգադրիչի օգնականներն ու յանձնառու հոգատարները, և սկսեցին ցրւել, որ գնան տուն, ժամանակից մի քիչ շուտ քնեն՝ վաղը կանուխ զարթնելու։

Գնացին... Գնալիս՝ բարեպաշտ ծերունիները մօտենում էին կարգադրիչներից սրան-նրան և քաղցրութեամբ հարցնում։

— Ձեզ դուրբան, գութանի մատաղի հըմար՝ մինուճար բալիս կըտամ զոհելու, ուր մնաց թէ մատաղացու։ Էդ խի չէր մեր դուռն էլ գալի, խի, մենք մատաղակեր չենք։

— Քեզ արբայութիւն, անախ, լաւ լաւ ստացել ենք ձեր տանից, շէն ու շէն կենար, — կրկնում էին հաւարողներն և շտապում գէպի տուն։



II

Գութանի մատաղի զոհաբերութեանը նախընթաց օրւանից պարաստում են, նաև գիւղի փոքրերը՝ տղայ թէ աղջիկ, բոլորը մի հաշիւ։

Նրանք բոլորը, առանձին առանձին, կամ խմբերով դաշտ ու արօտ ընկած, գոյնզգոյն ծաղիկներից փոքրիկ փնջիկներ են կապում և վերադառնալով գիւղը, ցրւում են թաղէթաղ ու ամեն տնւորի այդ փնջիկներից նւիրում։ Փոխարէնը տան տէրը մատաղացու է տալիս նրանց։ Այդ օրւան հաւարած ձուն, պանիրը, շօրն և ուրիշ ուտելիքները՝ վաղը մատաղի սեղանին զարդ են դառնալու և գութանաւորների սուփրէն շէն անելու։

— Առէք ձեզ դուրբան, առէք.

ձեր արդար սրտի խորհուրդը՝ ա-
ւալի դուր կըզայ Սատժուն, առէք,
ընդունելի ըլի ձեր մատաղը, —
ասում են փնջիկները ստանալով,
տան մեծ նանն ու տատը և փոք-



Ծաղիկներից փունջ է կապում

րիկ հաւարողներին առատու-
թեամբ տալիս են իրանց հասա-
նելիքը:

— Շնորհակալ ենք, — փրսփսում
են նախշուն աղջիկներն ու չալ-

տիկ տղաներն և շարունակում
զարձեալ իրանց հաւարքը:

Եւ այսպէս՝ չորեքշաբթին մըթ-
նում է... Աստեղագարդ գիշերը
թեւակոխում է ամբողջ գիւղն իր
շրջակայքով և ամենքին մատաղի
ախորժակով շուտ բուն անում:

— Դէհ, երեխէք ջան, — խրա-
խուսում է Բէգլար ապին իր
թոռներին, — ձեզ տեսնեմ, բոլորդ
էլ հօրիքչի էք, գութանաւորների
ձեռի եաղլըխը: Առաւօտը լոյսը
ծագելուն պէս՝ ամեն մինդ մի ա-
ման կառնէք և կըզնաք մատա-
ղատեղը՝ համ կօզնէք եփողնուն,
համ էլ բօլ-բօլ փայ կըստանաք
ու տուն կըզար:

— Ապի, ես կովկիթն եմ տանե-
լու, — ոգևորում է Մուկուշը, —
Մաճկալ Եղօն՝ ինձ լաւ է ճանա-
չում, ես հերու (անցեալ տարի)
ներա հօրիքչին եմ եղել:

— Խի, հօտաղ Գիքորը ինձ ճա-
նաչում չի, — մէջ է ընկնում Վե-
տօն, — ես էլ կաթնի բաղիէն եմ
տանելու. տեսնենք՝ ո՞ւմ շատ մա-
տաղափայ կըտան:

— Ապի ջան, սրանք հլամ բանի
խաբար չեն, — խօսում է Սաբօն

վերմակի տակից գլուխը հանելով,—ես էսօրւանից մատաղատեղն եմ եղել. մատուռի բազը աւելի, թամզել եմ, փէտ եմ կրել: Ինձ համկալ Պետին կանչել է, որ առաւօտը վաղ գնամ... Էն ես գիտեմ. թէ ինչ կը տանեմ և ինչքան մատաղ կը բերեմ:

Այսպիսի խօսակցութեան մէջ բոլորի քունները տանում է և խըռմփոցը տիրում է տան մէջ:

Բարի գիշեր նրանց... Եւ մէկէլ յանկարծ լսում է զանազան խըռմփալի խօսքեր.

—Օխայ, ինչ անուշ է է:

—Մի քիչ էլ ինձ տւէք, մսիցը, մսիցը:

—Ես շօրվեն եմ ուզում:

Եւ նրանք բոլորն երազի մէջ էին:



III

Համբարձման հինգշաբթին ծնում է: Օրը Մայիսեան գեղածիծաղ օրերից մէկն էր,—մի սիրուն, թըռըռան, շող-շողուն, ապրեցնող մի օր:

Արեգնազան արևը մի շիջիմ հագիւ բարձրացած, արդէն ս. Գէորգի վանքի զանգերը՝ «տան, տին, տճն» թակւելով, խաղաղ շինականին մատաղատեղն են հրաւիրում:

...Գնում էին ամենքն, առանց խտրութեան՝ հարուստ ու աղքատ, ծեր ու հասակաւոր, երիտասարդ ու չափահաս, մէր ու մանուկ, տղայ թէ աղջիկ, բոլորը գնում էին: Եւ նրանց գնացքն այնքան համապատասխան է նրանց տարիքին, որ առանց նայելու՝ կարելի է իմանալ թէ ով է անցնողը:

—Թակ-թըկ, թակ-թըկ՝ գոյգ

Թակ, տալով գնում էին յամբարայլ բոլոր ապինները:

— Թակ-թըկ-թակ, Թակ-թըկ-թակ, անցնում էին կայտառ ծերունիները:



Ս. Գեորգի վանքի

— Թակ, Թակ, Թակ, Թակ, ըտապում էին երիտասարդները:

— Զըստ-Ֆըստ, չըստ Ֆըստ, գալիս էին կանայք:

— Թը՛ռռռ, Թե առած Թռչում էին մանուկները:

Գնացին, հղջ գիւղը գնաց... Աչքդ բարին տեսնի, մատաղը վեց տեղ, վեց անագին պղնձների մէջ՝ խըլթ-խըլթալի եփ էր զալիս ու բըլդ-բըլդում և կըակը՝ ամեն մի պղնձի տակ ծով դարձած, փայ-

տի կտորներ էր՝ որ լափում էր, մոխիր շինում և դարձեալ չէր կշտանում:

Պղնձների մօտ կանգնած կերակուր եփողները՝ մեծ ուշադը-



Գնում են մատաղի

ըութեամբ հետևում էին մատաղին և երբեմն մի-մի կտոր միս պղնձից հանելով՝ ուտում էին — համը տեսնում, և ուրիշների ախորժակը զրգուում, բերնի ջուրը բերում:

Վերջապէս պատրաստուում է մատաղը և կարգադրիչ ուստա Մուսէսը ձայն է տալիս. — Տղէք, տէր-տէրին կանչեցէք, գայ մատաղն օրհնի, լաւ բօլ ժողովուրդ է կիտւել և էլ մատաղի հէնց ուտելու ժամինակն է:

— Լաւ, ասաւ ուստա Մուսէսը, թէզ արէք, սոված սիրտներս ձէն է տալիս, — միջամտում են ամենքը:

Քահանան գալիս է իր տիրացւով, օրհնում մատաղը, ապա, անցնելով սեղանի ծայրը, մի ծաղկաւէտ տեղ, իր տիրացւի հետ ծաղապատիկ բազմում է: Կանաչ տափերին նստոտում են և միւսները, զրեթէ բոլորը մէկս-մէկուց ցած — կարգով, ըստ հասակի և մեծութեան: Նրանք փափախները վերցնում են և ակնապիշ սպասում մատաղի սինուն (մատուցարան):

Բաժանւում է մատաղը. քահանան՝ ամենից շուտ, առաջի թասը ձեռքն է առնում և սկսում է խօսել.

— Օրհնեալ ժողովուրդ, դուք գիտէք, որ էս գութանի մատաղը կտրում ենք, որ եկող տարւայ գութանի ակօսը «բրատու» (պըտ-

ղատու) լինի, նրա վարածը՝ անփորձ մնայ, ցանածն ու տափածը հազար դառնայ: Որ ապրի մաճկալն ու հոտաղը, ողջ լինի ուլախարածն ու հօրիւքին, ղւաթով մնան դոմէշն ու եզը, արջառն ու ձին, մի խօսքով նրանք, ովքեր վար ու ցանքի օրերին շաբաթներով ու ամիսներով, տան երես չեն տեսնում: Դեհ, միաբերան աղաղակեցէք՝ ապրին մեր աշխատաւորները, որ էս նեղութիւնները քաշում են, ծառայում են Աստծու ճանապարհին, և էլ ամեն, Տէր Աստոծ, օրհնեալ լիցիք, ամեն:

Տէրտերը վերջացնում է ճառը և օղին խմում: Ամենքը միաբերան աղաղակում են,

— «Ամեն, ամեն Տէր Աստոծ» և օղին կուլ տալով, սկսում են մատաղն ուտել՝ և ձեռք ու մատները լպրստելով բարեմաղթել:

— Տէր Աստոծ, Քու աչքը քաղցը կենայ մեր անդ ու անդաստանի, մեր վար ու ցանքի, մեր սար ու դաշտի վրա:


— Ամեն, լսում է աջ ու ձախից:

— Դալար կենայ մեր գեղի մաճկալներին ձեռն ու ոտը, ղւաթին

ըլի մեր եզն ու գոմեշը, ամենքն էլ ապրեն ջանսադութիւնով:

— Ողջութիւն ամեն, տէր Աստօծ:

— Ապրեն մեր հօտաղն և ուլախարածն, մեր հօքիքչի ջէհէլ-ջուհուլները, ցուղլուտութիւն (ծուլութիւն) չանեն, մեծանան, մեր պատիւը իմանան:



Կեեկ-կեսացել վերադառնում են

— Այ ապրեն, շատ ապրեն,

Կերան և օրհնեցին, միմի թաս գինի էլ վերեկից կուլ տւին, և յետոյ վեր կենալով, գունչուսուշը փափախներով, կամ փէշերով սըրբեցին, միրուքները տըմբ-տըմբացնելով ճանփայ ընկան ու գընացին:

Նրանք ծերունի ապիւններն էին:



IV

Քոլորին փայ հասնելուց յետոյ, հերթն եկաւ մանուկներին - հօքիքչիներին: Նրանք էլ նստոտեցին մի ստերաշատ ծառի տակ և ինչ ձեռքներն ընկաւ՝ կուլ տւին, կերան, ծաքն ու հովն՝ ով էր հարցնում, բաւական էր որ մատաղը տային՝ այնուհետեւ մնաս բարե...

Սրանք էլ կերան, կշտացան: Վեր կացան, տարած ամանները վեր առան ու լիք-լիք ճանապարհեցին տուն: Գնալիս՝ ճանապարհին զանազան հանար-շիղար խօսելով և «պրկու» ածելով, միմեանց ուրախացնում, և սրախօսում էին:

— Պո՛ւճո՛ւ, հա՛-պո՛ւճո՛ւ, պրի-պո՛ւճո՛ւ-հա՛-պո՛ւճո՛ւ, — փչում էին հասկերի ծղնօտից շինած պկի մէջ և տուն շտապում թրուկոտալով:

Կերան, կշտացան, փայներն առան ու գնացին մեր մայրերն էլ: Նրանց գալն ու գնալը, նրանց ուտելն ու խմելը, նրանց խօսքն ու զրոյցը, գրեթէ՝ ոչ ոք չիմա-

ցաւ: Նրանք չխօսկան եկել, չը-
խօսկան էլ գնացին: Նրանց մէրը՝
հէնց անխօս էլ ծնել է նրանց:
Միայն, նազիկ-մազիկ պուճուր
հարսներին հագուստներին կարած
արծաթի շանչխուր - մանչխուր-
կըռնանոցներին չըխկ-չըխկոցն էր
նրանց լուծիւնը խանդարում և
մէկէլ՝ ազիկ-մազիկ Սօնիկներին
ծամերն էր, որ կոճկազարդ արած,
տասնեակ ճիւղերով, միմեանց դիպ-
չում էին և ձէն ու ձուն հանում:

Մատաղն ամենքին բաւակա-
նութիւն տւաւ: Ամիսներով մի-
համ չիմացած հարիւրաւոր մարդ
այդ օրը հարսնաւորի էին նման:
Կերան կշտացան ամենքն և գնա-
ցին լիքն ու բրին:

Մնացած մատաղը՝ լաւ լաւ
կտորներ, չիդար-բանդէն, չաղ-չաղ
պատառները, խորովածացուն, տօլ-
մացուն՝ մնում էր մաճկալներին,
ամօլչիներին, հօտաղներին...

Նրանք էլ, երբ ամենքին բա-
ւականութիւն տւին, նստոտեցին
սուփրի շուրջը, մէջ բերին հոգեպա-
հօստ ազիկ կերակուրները և դափ
ու գուռնով մի լաւ քէֆ արին:

Այ թէ լաւ Համբարձում արին
հա: Է՛րնէկ է՛ն օրին...

<< Ազգային գրադարան



NL0396012

6347